ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1919 - ՄԱՅԻՍ - 1919

Գ. Անեցի. — Ջարդերու քաղաքականութիւնը և պատժելու ժամը. թարգմ. «La Tribune de Genève» թերթէն	129
Տէր Մովսէսեան Հ. Ս. — Աճապարենք պահանջը ստիպողական է	133
Հացունի. Հ. Վ. — Հայ գրչները պատմութեան մէջ.	139
Տայեան Հ. Գ. — Անցեալի յուշերէն	142
Sollini D. Giuseppe. — A Mechitar, poesia	143
J Mathorez. Արևելքի ժողովրդեան տարբեր Գաղղիոյ մէջ – թարգմ. Հ. Ց Ալգեր	144
Աճառեան. Հ. — Հայերէն նոր բառեր Մ. Ուհա. մէջ	149
Բան իմաստասիրական	154
Երեմեան Հ. Ս. — Պատմական վէպ, Ցաղթանակ	154
Խանպէկեան Մ. — Պսակ Հայրենեաց Մխիթարին – (քանաստ.)	158
Արսէն–Երկաթ. — Իրիկունը. (քանաստ.)	159
Յովսեփեան Հ. Ա. — Երգ ազգային դահատակաց – (քանաստ.)	159
Հայկ-Արամ. — Աչուզի Ուխտը – (քանաստ.)	160

ՑԵՂԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ ՄԸ

Խաղաղութեան վիճաժողովին վերաբաղեալ հարցերը լուսաբանելու համար, ականատես և ականջալուր վկայի մը ցուցումներն պէտք է շատ աւելի կշիռ ունենան, քան կարգ մը գիտնական-ներու ուսումնասիրութիւնք, որոնք կատարուած են իրական կեանքի միջավայրէն դուրս։ Այն յանձնախումբն որուն յանձնուած է պատրաստել փոքր ազգութիւններու ազգագրական քարտէս-ները, անշուշտ վիճաժողովի գործն թեթեւցնելու համար, այլ և այլ ցեղերու ներկայացուած տեղերուն վրայ կազմեցին իրենց ծրագիրները։

Այսպէս մեր Հին Հայաստանն ալ, հակառակ հին աշխարհագրական քարտէսին ըստ հին աշ-խարհագրաց և պատմագրաց, ունեցաւ իւր նոր գծագրողները, որոնք Հայաստանի քղանքները կտրատեցին և տուին օտարին, իբր ընիկ ժա-ռանգներու, ուժի իրաւունքով մեզէն յափշտակած հողերը։ Ասոնց կարգին մէջ մտան և Քուրդերը որ բնաւ ինքնաճանաչութիւն չունին իրենց ինչ լինելուն և ոչ մի գիտակցութիւն ազգային միու-թեան։ Զբսուելու (թաթար պարսիկներն) սիրա-շահելու համար, հարկ համարած են Մասեաց գագաթէն մինչև Գանձակ Ատրպատականի (Դա-վրէժ) անդամահատել. մեր արևելեան սահմա-նագլուխն ուր ամեն անգամ որ Պարսից հետ կռուի ելլէին, մեր կտրիճ զօրավարներն կը փութային հոն դիմադրելու պարսից բանակին, արգիլելու անոնց ներս խուժելը։ Վարդանանց յիշատակն հոն անմահացաւ։ Բայց դեռ կարելի է ցաւ ի սիրտ գիշել այս մասն քանի որ ներ-կայապէս պարսկի իշխանութեան ձեռքն է և չիզոք մնաց ազգաց պատերազմէն։ Իսկ հարաւա-յին սահմաններն ինչ պատճառաւ խոտորկոտուր ձեւեցին. Քուրդերուն համար — Անոնք ալ ունին եղեր ազգային պահանջ — Ցենք ժխտեր այդ իրաւունքն մեր չար դրացիներուն ու ցանկալի է որ Սահմաններ գծուին. բայց ոմանք համար։ Մենք հարկ կը համարինք արտագրել Պր. Ս. Սա-պահ-Գիւլեանի հրատարակած փոքր–Հայքի Ցի-չատակարաններու գրքէն, քաղելով հետեւեալ ազգագրական տեղեկութիւնները, այն Քուրդե-րու մասին, որոնք մրցակից հանդիսացեր են Հայերու ազատագրութեան.

Խոտիհատականներու Ակումբի ականաւոր-ներէն մէկն Մուստաֆա Նէճիպ բէյն է խօսողն և պատասխանողն Պր. Սապահ-Գիւլեանի հարցին.

— Ինչ է ձեր տպաւորութիւնը. ինչ համո-զում ունիք, քրդական ընդհանուր ազգային միութիւն կարող է լինել, այն ստեղծուն, որ մի օր պետական սպառնալիքի հանգամանք առնէ, ինչպէս որ մի քանի քուրդ ազգայնականներ մտածում են։

— «Երբէք. այդ կողմից բոլորովին ապահով կարող ենք լինել։ Քրդերի մէջ ոչ-ոք ժամանակ ընդհանուր միութիւն կարող է լինել՝ մանաւադ մեր Պետութեան դէմ։ Նախ մեր երկրի հարաւ-ային լեռներում, Միջագետքի վերին մասերում, Տաւրոսի լեռնաշղթայի հարաւային փէշերի վրայ տարածուող Սիւլէյմանիէի քրդերը ուղղակի թրքացումի ուղիի մէջն են մտել. մեր քիւրդ պաշտօնեաներից մեծամասնութիւնը նրանցից են. նրանք ոչ մի պարագայում կարող են և կը

© National Library of Armenia

ցանկանան ընդհանուր գործ կատարել Հիւսիսային և Արևելեան կողմերը եղողների հետ, որ աւելի լեռնակեաց, վրանաբնակ են և նախնական դրութեան մէջ են գտնուում։ Ցեղով՝ կրօնականները, չէյիները, գլխաւոր ցեղապետները կան, որոնք մեր ձեռքին են եւ շատերն էլ պետական զանձարանից ռոճիկ ստացողներ։ Դրանց հետ կան եւ Համիտիէները, որոնք պետական մեծ կապ են։ Բացի դրանից՝ իրենց մէջ տիրող աւատապետական դրութիւնը և Մայուն թշնամական փոխադարձ յարաբերութիւնները կան, որոնք երբէք թոյլ չեն տալ, որ նրանք իրարու հետ միանան և մեզ դէմ քայլեն։ Այդ բոլորից աւելի քրդի հոգեբանութիւնը կայ։ Նա մինչև որ նախապէս չը համոզուի, որ ինքը յաղթող պիտի լինի, յառաջ չի նետուիլ, յարձակում չի գործիլ։ Աչքի առաջ պէտք է ունենալ եւ քրդերի ցրուածութիւնը թէ՛ մեր երկրի, թէ՛ Ռուսաստանի և թէ՛ Պարսկաստանի մէջ։... Քուրդը իր չախչախիչ մեծամասնութեամբ՝ մի անտուն, անտեղ, կիսանօթի, խաչնարած, լեռների, ձերպերի մէջ ապրող աւազակաբարոյ ցեղերի շեղջակոյտ է, անկազմ, անկերպարան։ Նրանք չեն, որ պիտի յաջողեն իրարու հետ միանալ և ազգութիւն կազմել ու մեր պետութեանն էլ սպառնալ։ Այնպէս որ, քրդերից մեզ ոչ մի վտանգ է սպառնում և կարող է սպառնալ։

Կ՚ուզէի հարցնել նաև, թէ քուրդ–արաբական միութիւն կարող է լինել. դրա նշանները տեսե՞լ էք. ի՞նչ կարծիք ունիք այդ մասին։

— « Երբէ՛ք. ոչ մի տեղ։ Քիւրդերը և Արաբները, թէ և երկուսն էլ Իսլամներ, բայց բոլորովին տարբեր մշակոյթի, տարբեր նկարագրի և բնաւորութեան տէր ժողովուրդներ են. նրանց մէջ բնաւ նմանութիւն չը կայ։ Քուրդը Արաբից աւելի է խորշում, քան Հայից։ Քուրդը աւելի շուտ ընտանեկան, բարեկամական կապեր է պահում Հայի, քան Արաբի հետ։ Քրդերը և Արաբները մի տեսակ բնական ներհակութիւն ունեն իրարու հանդէպ. նրանք իրարու քաշել, տանել չեն կարողանում. նրանցից ամէն մէկը իր առօրեայ յարաբերութիւնները աւելի Հայերի հետն է անում. քան միմեանց »։

« Իմ չը Ջազայած վայրերում՝ Արաբները Ա-կումբներ ունեն. նրանց մէջ ազգային ոգի աւելի կայ, է՛լ աւելի դժգոհ են մեզանից. բայց աչքի առաջ ունենալով Իսլամութիւնը, որ կրօնա–քաղաքական մի գաղափարակցութիւն է բերում իր հետևողների մէջ. ուստի դժուար թէ այդ տարրերը մի օր միանան և մեր պետութեան սպառնան։ Բացի դրանից, մենք միշտ միջոց ունենք նրանց իրարուց զատելու, հեռացնելու և առաջին պատեհութեամբ երկուսին էլ ճզմելու։ Այս էլ կայ, որ Միջագետքի և Սիւրիայի մէջ գտնուող Արաբները շատ թոյլ են և փափուկ, մեղկ կեանքի սովոր. նրանք Անապատի Արաբների սիրտն ու հոգին չունեն. ուստի դրանցից չէ, որ մեզ վտանգ կարող է գալ »։

Ահա թէ մինչև ո՞ւր կը դարձի հին վիշապն թունաւորելու Հայոց հարցը, և թէ ինչպէս պատմական ճշմարտութեան և արուեստական միջոցներով դիւանագիտութիւնն կը կուռի Հայուն դէմ, ի հեռուկս այնքան անմեղ արեան, մարդակերպ գազաններուն չահեցնելով աւելի ազատութիւն և աւելի լայն սահմաններ։

ՄԵՂՈՒ ՇԻՐԱԿԱՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՔԱՐՏԷԶ

Հայաստանի Նոր արևմտեան զանազան քարտէզներ հրատարակուեցան հոս ու հոն թերթերու, լրագիրներու մէջ, գունաւոր և անգոյն, որոնք միայն մեր Ազգային հին իրաւանց սահմաններն ցոյց տալու բնոյթն ունէին։ Բայց յետ միանգամ որոշուելու, անոնք իրենց գործը կատարած կը համարին, և ուրիշ ոչ մէկ նպատակի չեն ծառայեր։ Ցայտնապէս զգալի պէտք մը լրացնելու համար, Մխիթարեան Միաբանութիւնս ձեռնարկեց կատարեալ և ամբողջական Հայաստանի քարտիսի մը պատրաստութեան, որն ի լոյս պիտի գայ անշուշտ, գունատիպ, յետ Ազգային սահմաններու որոշողութեան՝ քաղաքաց ու տեղեաց անուններու փոփոխմամբ։ Ներկայ անհրաժեշտ պէտքերու համար սակայն, փութացինք Ցատեանի 1849ի Հայաստան աշխ. մեծադիր և փոքրադիր գունատիպ ճոխ քարտէզներու վիմատիպ կրկին հրատարակութեան, որ ոչ նուազ օգտակար պիտի ըլլայ առ այժմ առանձնականաց և դպրոցներու համար։ Վաճառման համար պատրաստ են։

Մեծադիր 57×80 *գունատիպ աշխ. քարտիսին գինն է ֆր.* 5. —
Փոքրադիր 24×32 » » » » » » 1. 50

© National Library of Armenia

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ ՈՒ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Կ. Ց. Փայլիկեան. — ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԵՐ, ներդաշնակեց Գ. Հ. Այգունի. հրատ. կոչնակ ընկ. — 1919, Տ. 2.00 և 15 սէնթ թղթատարի ծախքով. — 115 E. 24th St. New York.

Պետրոս Դուրեան. — ՏԱՂՔ ԵՒ ՆԱՄԱԿԱՆԻ, P. O. Box 58, Madison Square Sta. New York. 1918, էջ 112.

Տիգրան Գ. Պապիկեան. — ԿԱԽԱՐԴՈՒԹԵԱՆ ՑԱՒՈՎ ԲԵՐԱՆ ՑԱՒԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ԴԱՐՄԱՆԸ, ընդհանուր առողջապահութիւն. 86 Third St., Lowell Mass. 1918, էջ 94, 1 Տ.

ԱԶԱՏ կիսամսեայ հանդէս, ազգային, գրական, քաղաքական ու երգիծական, ամերիկահայ ազատական հոսանքին օրգան. — ՀՆՈՐՀԱԼՈՒԹԵԱՄԲ ստացանք նուէր խմբագրութեան կողմէ, թիւ 1էն մինչև 18. — 1918-19, էջ 288, The Azad, Fuller Building, New York.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԱՌՋԵՒ. — հրատ. Հայրենիք օրաթերթի, Հայաստանի գունատիպ քարտէսով, էջ 32, գին 25 սէնթ. Hairenik Press, 7, Bennet Street, Boston Mass.

LA QUESTION ARMÉNIENNE *devant la Conférence de la Paix*, avec trois cartes géographiques de l'Arménie. (Ազգ. Պատուիրակութեան նուէր). — էջ 28, Paris.

TABLEAU APPROXIMATIF des Réparations et Indemnités pour les dommages subis par la Nation Arménienne en Arménie de Turquie et dans la République Arménienne de Caucase. (Ազգ. Պատուիրակութեան նուէր). էջ 14. Paris.

M.me Thérèse Philippe Bresse. — LA FAMINE DE LA SYRIE ET LE MARTYRE DE L'ARMÉNIE. Conférence. (նուէր Գ. Նիկոդիմոսեանէ). էջ 16. Imp. Arturo Serafini-Alexandrie, 1919.

Doct. Z. Chéridjian. — Riposte à la brochure de M. Kara Schemsi : « LES TURCS ET LA QUESTION D'ARMENIE ». 18, Pélisserie, Genève, 1919, էջ 45, գին 0,50.

Etienne Brasil. — O POVO ARMENIA. սպանիերէն լեզուով, պատկերազարդ. Rio de Janeiro, էջ 22.

Vahan Kurkjian. — The Armenian Kingdom of Cilicia. էջ 18.

ԱՐՄԷՆԻԱ. Տիար Մ. Փորթուգալեան զմայելի յարատևութեամբ 1885էն ի վեր կը շարունակէ « Արմէնիա » թերթին հրատարակութիւնը։ Վաղեմի ազգային պատկառելի գործիչը, անվհատ հայրենասիրութեան աւիւնով վառուած, ոտիթը չի փախցներ՝ իւր թերթին մէջ սեղմ իմաստներով պարզել այն ամէն լուր և տեղեկութիւն՝ որ ստուգիւ հայ մտքին, հայ սրտին, հայ հոգւոյն կը պատկանին։ Տարեշրջանի մը բաժնեգինը 20 ֆրանք ըլլալով, պէտք է դիմել

M. M. Portoukalian, Directeur du journal « ARMENIA »

17, Place Alexandre-Labadié — **MARSEILLE** (France)

© National Library of Armenia